Պարույր Սևակ

Անվերնագիր 2

Ինչ լա՜վ է, որ դու աշխարհի մեջ կաս,
Ինչ լա՜վ է, որ դու քո ծանր բեռով
Քո ծանր անցյալից հասար այս ներկան
Կենաց ու մահու ճանապարհներով:
Ինչ լա՜վ է, որ դու լոկ պատմությո՛ւն չես,
Ընկած սյուն, խոյակ կամ հին ձեռագիր:
Պատանու նման տաք է քո շունչը,
Շիկնել է դեմքդ ներքին կրակից:
Ինչ լա՜վ է զգալ՝ դու մի կամուրջ ես,
Որ շաղկապում է անցյալն ու ներկան,
Եվ որ խոսում է նորից քո մուրճը
Իր հասկանալի լեզվով անթարգման:
Որ դու աշխարհի տված հարցին էլ
Ինձ նման ունես քո պատասխանը.
-Ես սովետական քաղաքացի եմ,
Ես՝ Սովետական նոր Հայաստանը:

Երևան